ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքը «Համաշխարհային տնտեսության փոփոխման միտումները և Հայաստանի Հանրապետության մարտահրավերները» խորագրով գիտաժողովին

13 դեկտեմբերի, 2011թ.

Հարգելի հյուրեր,
Հարգելի գործընկերներ,

Ինձ համար հաճելի է Ձեզ ողջունել Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 20-ամյակին նվիրված այս Գիտաժողովում:

21-րդ դարը նոր դարաշրջան է: Տնտեսական գլոբալացման արագացումը նոր հնարավորություններ է ստեղծում զարգացող երկրների համար, ինչպիսին նաև Հայաստանն է:

Համաշխարհային տնտեսության միտումները առաջ են բերում բազմաթիվ մարտահրավերներ, որոնց դիմավորելու միակ ուղին արագացող տեխնոլոգիական, սոցիալական, մշակութային փոփոխություններին հարմարվելն է:

Մենք ապրում ենք այն ժամանակ, երբ տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացման ազդեցությամբ արագանում են գլոբալ փոփոխությունները: Անկախ զարգացման մակարդակից՝ ոչ մի երկիր չի կորող անմասն մնալ այդ գործընթացներից:

Տնտեսական վերափոխման գործընթացում, Հայաստանը, ինչպես որ զարգացող մյուս երկրները, պետք է լուծեն մի շարք սոցիալական ու տնտեսական այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են տնտեսության ամրապնդումը, կայուն զարգացման պահպանումը, սոցիալական կայունությունը և զբաղվածությունը:

Միաժամանակ, մենք լավ ենք գիտակցում, որ Հայաստանի տնտեսությունն այլևս կազմում է համաշխարհային տնտեսության մաս և վերջինում տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխություն ունենում է իր ազդեցությունը նաև մեր տնտեսության վրա. դրական, թե բացասական:

Հետևաբար, համաշխարհային տնտեսության փոփոխությունների ուղղության իմացությունը և ազգային տնտեսության վրա դրանց ազդեցության չափերի գնահատումը կարևոր են երկրի տնտեսական զարգացմանն առնչվող որոշումների ընդունման համար:

Հետճգնաժամային այդ ժամանակաշրջանում քննարկվում են ճգնաժամի դասերը, իսկ համաշխարհային տնտեսության առաջատար երկրների ղեկավարները քննարկում են նաև նոր ու արագ աճի հնարավորությունները, նույնականացնում դրա թիրախները:

Վերջին ժամանակաշրջանում ՀՀ կառավարությունը, քաղաքական կուսակցությունները պարբերաբար քննարկում են երկրի ոչ միայն հետճգնաժամային, այլև տևական զարգացման հիմնախնդիրները, փորձում գտնել իրավիճակից դուրս գալու ուղիներ: Շնորհիվ ՀՀ նախագահի, Կառավարության գործադրած ջանքերի՝ հնարավոր եղավ որոշակիորեն մեղմել ճգնաժամային երևույթները: ՀՀ նախագահը հայտարարեց երկրի զարգացման գերակայությունները, որոնց իրացման համար կպահանջվի գործարար շրջանների աջակցությունը: Միայն բարձր կազմակերպված հասարակություններն են ի վիճակի հաջողությամբ հաղթահարել նման դժվարությունները:

Պետք է մի բան ըմբռնել, որ յուրաքանչյուր ճգնաժամ ոչ միայն աղետ է, ինչը ստեղծում է սոցիալական մեծ լարվածություն, այլև հնարավորություն, և կատարում է յուրօրինակ «սանիտարի» դեր՝ տնտեսությունը «մաքրելով» հին տեխնոլոգիաներից, արտադրության կազմակերպման հին մեթոդներից, ձերբազատում կարծրատիպերից:

Այդ առումով՝ պատահական չէ, որ ճգնաժամերից հետո երբեմն առանձին երկրներ ու շատ դեպքերում ոչ զարգացած, ցուցադրում են առաջանցիկ զարգացման տեմպեր, տեխնոլոգիական ճեղքում:

Մենք տեսնում ենք, որ տնտեսական աճի առաջատարներ են դառնում զարգացող տնտեսությունները, ինչը պետք է ազդակ լինի նաև Հայաստանի համար: Ըստ գնահատումների՝ առաջիկա տասը տարիներին զարգացող երկրներում աճի տեմպերը 2.5 անգամ կգերազանցեն զարգացած երկրներում աճի տեմպերին:

Ինչպիսի՞ն կլինի զարգացած երկրների դերը փոփոխվող աշխարհում: Ինչպե՞ս է ապահովվելու նրանց առաջատարությունը: Մենք այսօր տեսնում ենք, թե ներդրողների, թե քաղաքական գործիչների տրամադրությունն ինչպես է լավանում տնտեսական ցուցանիշների բարելավմանը զուգընթաց:

Սակայն տնտեսական ճգնաժամի հարցը դեռևս դուրս չի գալիս ոչ կառավարությունների, ոչ էլ գործարար շրջանների քննարկման օրակարգից: Հավանաբար դա պատահական չէ, քանի որ վերջին ճգնաժամը մինչև վերջ չի խաղացել «սանիտարի» իր դերը:

Համաշխարհային համակարգի շատ անհաշվեկշռվածություններ դեռևս մնում են և մեզ համար կարևոր է գնահատել, թե ինչպես է նշանակում այդ հաշվեկշիռների պահպանումը, ինչպիսին են նոր մարտահրավերները, ինչպես կարող ենք պատասխանել դրանց, գնահատել իրավիճակն աճող բյուջետային պակասուրդով, պետական պարտքերով, համաշխարհային սղաճով:

Մենք բոլորս հասկանում ենք, որ ճգնաժամից իրական ելքը ոչ միայն ու ոչ այնքան տնտեսական ցուցանիշների վերականգնում է: Իրական ելքը վստահության վերականգնում է: Վստահությունը Կառավարության գործողությունների, ազգային հաստատությունների արդյունավետության հանդեպ, վստահությունը պոտենցիալ գործարար գործընկերների հանդեպ, ինչն ընդլայնում է գործարքների և նախագծերի իրացման հնարավորությունները, վստահությունը գլոբալ հաստատությունների և գլոբալ կարգավորման հանդեպ:

Հայաստանի տնտեսությունը փոխում է զարգացման մոդելը: Անցած 20 տարիների աճի գործոնները սպառված են, մենք դա լավ ենք հասկանում: Այսօրվա մեր խնդիրն է չանտեսել ապագայի մարտահրվերները, տեսնել հնարավորությունները և ռիսկերը, տնտեսությունում նոր գործընթացների բոլոր հնարավորությունները:

Հարգելի բարեկամներ,

Համոզված եմ, որ այս Գիտաժողովի ընթացքում ծավալվելիք քննարկումները կլինեն հետաքրքիր և օգտակար, իսկ գիտաժողովի մթնոլորտը կնպաստի նոր գաղափարների առաջացմանը:

Շնորհակալություն ուշադրության համար: Ցանկանում եմ հաջող և արդյունավետ աշխատանք: